83. ՆԱԶԱՐԵԱՆՑ Յ. — Համառօտ քերականութիւն աշխարհիկ լեզուի, Գ. եւ Դ. տարիների համար կազմած, Թիֆլիս, 1887։ Գին՝ 20 կոպ.։

84. ՆՈՐ ԴԱՐ, Օրաթերթ քաղաքական, Դ. Տարի, Թիֆլիս, 1887։

85. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ Գ. — Ոսկի բզեզ. Թիֆլիս, 1887։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 61: Նոր Դար, 1887, Թ. 115—117:]

86. ՇԱՐԺՈՒՄ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ, Ամսաթերթ, Ե. Տարի, Կոստ. Պոլիս, 1887։

87. ՈՃ ԱՐԵՒԵԼԵԱՆ, Շաբաթաթերթ, Ա. Տարի, Կոստ. Պոլիս, 1887։

88. ՈՍԿԱՆ Յ. — Դաստիարակութիւն, Ա. Կրթական վիճակ մեր։ Բ. Հայ վարժիչք եւ վարժարանք, Կոստ. Պոլիս, 1887։

89. ՈՍԿԵԱՆ Ա. ԿՈՄԻՏԱՍ, — Առձեռն բառարան հայերէնէ ի գաղղիերէն. ի պէտս ազգային վարժարանաց, Կոստ. Պոլիս, 1887։ Տպ. Ն. Պէրպէրեանի։

90. ՈՒՍԱՆՈՂՔ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ — 1. Ուրիշի գերեզմանի վրայ առանց արտասունքի լաց են լինում։
2. Բոլգար աւազակապետ։
3. Ժաննա տ՚Արք, Գաղղիայի ազատող։
4. Նեգա, Տատիս պատմածը։
5. Դոնչօ։
6. Վիլհէլմ Տէլլ. Վ. Օստրոգորսկուց, — Վէպք, Ս. Պետերբուրգ, 1887։ Տպ. Սկորոխոդովի։ Իւրաքանչիւր տետրի Գին՝ 5 կոպ.։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 72: Նոր Դար, 1887, Թ. 101, 132: Աղբիւր, Թ. 10, Բ. Բաժին:]

91. ԶՕԼԱԳԵԱՆ ՄԿՐՏԻՉ Յ. — Դասագիրք ազգային պատմութեան Հայոց, սկսեալ ի Հայկայ մինչեւ ի Թուականն Քրիստոսի, 1887: Դ. Տպգր., Կոստ. Պոլիս, 1887։

92. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ Գ. — Բանալի Անգղիերէն լեզուի, Մասն Բ. Կոստ. Պոլիս, 1887։ Տպ. Գ. Պաղտասարեան։ Գին՝ 10 ղրշ.։

93. ՊԱՏԿԱՆԵԱՆ Ք. — Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Բ. Տպգր., Ս. Պետերբուրգ, 1887։ Տպ. Սկորոխոդովի.

94. ՊԱՏԿԵՐ, Շաբաթաթերթ, Ա. Տարի, Կոստ. Պոլիս, 1887։

95. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Համառօտ, յօրինեց Մ. Մամուրեան, Զմիւռնիա, 1887։ Տպ. Մամուրեան։

96. ՊԷՐՊԷՐԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ — Տարերք համբռհաշւոյ, Կոստ. Պոլիս, 1887։ Գին՝ 10 ղրշ.։
[Քննդտ. Արեւելք, 1887, Թ. 1032:]

97. ՊԷՐՊԷՐԵԱՆ ՆՇԱՆ — Թշուառներ. Հատ. Դ. Բ. Տպգր. Կոստ. Պոլիս, 1887։ Տպ. Պէրպէրեանի։

98. ՊՕԶԱՃԵԱՆ Բ. Մ. — Գործնական Նոր քերականութիւն Ֆրանսերէն լեզուի, Կոստ. Պոլիս, 1887։ Գին՝ 7 ղրշ.։

99. ՊՕԶԱՃԵԱՆ Բ. Մ. — Ժիւլ Վէրնի Ուղեւորութիւն շուրջ զլուսնով (Թրգմ.) Կոստ. Պոլիս, 1887։ Հանեալ Արեւելք օրագրէ։

100. ՍԱՐԳԻՍԵԱՆՑ Հ. ԲԱՐՍԵՂ. Քննադատութիւն Թղթոյն Մ. Խորենացւոյ առ Սահակ Արծրունի, եւ Պատկերի Տիրամօրն ի Հոգեաց Վանս, Վենետիկ, 1887։ Հանեալ Բազմավէպ հանդիսէ։

101. ՍՐԱՊԵԱՆՑ ԿԻՒՐԵՂ Վ. — Ողջախոհութիւն ուղիղ ճանապարհ անձնութեան, Թիֆլիս, 1887։ Տպ. Յ. Մարտիրոսեանցի։ Գին՝ 1 րբ. 20 կոպ.։

102. ՎԱՐՎԱՌԷ, կամ Ժթ. դարու զոհը, վէպ Եհրամճեանց Ս. Խաչատուրէ, Թիֆլիս, 1887։ Տպ. Յ. Մարտիրոսեանցի։

103. ՎԵՀԱՊԵՏԵԱՆՑ ՍՏԵՓԱՆՈՍ — Գուստավ Վազա (Թրգմ.) Ալեքսանդրոպոլ, 1887։ Տպ. Գ. Սանոյեանցի։ Գին՝ 80 կոպ.։

104. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ Ազգային վարչութեան Զմիւռնիոյ, 1885 Յուլ. 22էն մինչեւ 1887 Օգոստ. 19։ Զմիւռնիա, 1887։

105. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ Ն. — Մայրենի լեզուի քերականութեան տարերք, Ա. Մաս, Բ. Տպգր., 1887։ Տպ. Մարտիրոսեանցի։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 134: Աղբիւր, 1887, Թ. 12, Բ. Բաժին:]

106. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ՊԵՏՐՈՍ — Սիրոյ զղջումն (Թրգմ.), Շուշի, 1887։ Գին՝ 50 կոպ.։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 4:]

107. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ Մ. — Դասագիրք գծագրութեան, Բ. Տպգր. Ալեքսանդրոպոլ, 1887։ Տպ. Գ. Սանոյեանցի։ Գին՝ 50 կոպ.։

108. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ Մ. — Գէորգ Ստեֆենսօն (Թրգմ.), Շուշի. 1887։ Գին՝ 20 կոպ.։

109. ՏՆՏԵՍ, Ամսաթերթ, Ա. Տարի, Կոստ. Պոլիս, 1887։

110. ՐԱՖՖԻ — Կայծեր, Բ. Հատ., Թիֆլիս, 1887։ Գին՝ 2 րբ.։
[Քննդտ. Աղբիւր, 1887, Թ. 8, Բ. Բաժին:]

111. ՑՈՒՑԱԿ Գրոց տպագրելոց ի Վենետիկ. ի Տպ. Ս. Ղազարու, 1887։

112. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ Յ. Գ. — Տեղագրութիւն, Կոստ. Պոլսոյ եւ շրջակայից, Կոստ. Պոլիս, 1887։

113. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ Յ. Գ. — Նախապատրաստական դասագիրք աշխարհագրութեան, Կ. Պոլիս, 1887։

114. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ — Խրիմեան Հայրիկ, Թիֆլիս, 1887։ Գին՝ 40 կոպ.։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 135:]

115. ՓՈՒՆՋ, Շաբաթաթերթ, ԻԸ. Տարի, Կոստ. Պոլիս, 1887։

116. ՔԱՄԱԼԵԱՆ ԲԱՐՍԵՂ — Էլիզայի վիշտը (Թրգմ.), Թիֆլիս, 1887։ Տպ. Ռօտինեան։
[Քննդտ. Մշակ, 1887, Թ. 105: Արձագանք, 1887, Թ. 36: Նոր Դար, 1887, Թ. 156:]

117. ՔԱՄԱԼԵԱՆ ԲԱՐՍԵՂ, Տես՝ Երեցփոխեան։

118: ՔԻՉԻՐԵԱՆ Տ. ԽՈՐԷՆ ՔՀՆՅ. — Հայերէն լեզու կամ երկրորդ գիրք ազգայոց, Կոստ. Պոլիս, 1887։ Գին՝ 3 ղրշ.։

119—122 ՕՐԱՑՈՅՔ Ս. Փ. Հիւանդանոցի ընդարձակ եւ համառօտ, (Կոստ. Պոլիս.) Վենետիկի, Էջմիածնի եւ Տէր Աբրահամեանի, (Ռոստով.) 1887։

(Շարունակելի։)

---

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

---

### ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
### մինչեւ մեր օրերն:

**Յօրինեց Մ. Մամուրեան, Զմիւռնիա, 1887:**
**Տպ. Մամուրեան:**

Պր. Մամուրեան՝ ինչպէս ինքնին գրքին սկիզբը կը ծանուցանէ, քաղած է այս գործն իւր եռահատոր Ընդհանուր Պատմութենէն, եւ իբրեւ դասագիրք պատրաստուած է ի դիւրութիւն ուսանողաց։

Դասագրոց հրատարակիչք անշուշտ այն շարժառիթէն կը մղուին, (գոնէ պէտք են մղուիլ,) թէ հարկ է "մանկութեան զարգացման նպաստող մատեաններ ի լոյս ընծայել„։ Այս շարժառիթն ակներեւ կը տեսնուի առ Եւրոպացիս. իսկ մեր հայ ազգին դասագրոց նկատմամբ ըստ մասին միայն կրնանք զայս հաստատել։ — Այս համառօտ տեսութիւնս կ՚առաջնորդէ Պր. Մամուրեանին այն հրատարակութեան վրայ դարձնելու մեր մտադրութիւնն։ Մամուրեան իբրեւ բազմամեայ հրապարակագիր ծանօթ է հայ հասարակութեան եւ

digitised by A.R.A.R.@

այս Հայոց Պատմութիւնն ալ իւր անխոնջ աշխատասիրութեան նոր ապացոյց մըն է։ Սակայն իբրեւ կատարելագոյն դասագիրք յաջողա՞ծ է այս գիրքը։

Հեղինակն, որուն գիտութիւնն ու միտքը չկրցանք պայծառ իմանալ յատուկ յառաջաբան մը չունենալուն, գրած է իւր երկասիրութիւնն այնպէս՝ ինչպէս ցարդ գրուած եւ ընդունուած է մեր ազգային պատմութիւնն. բայց որովհետեւ ինքը 1887ին գրած է, եւ արդէն ի Կ. Պոլիս 1886ին Մ. Գարագաշեանց հրատարակած է գրեթէ նոյն նպատակաւ եւ նոյն բովանդակութեամբ Պատմութիւն Հայոց դասագիրքն, կը պահանջուէր բնականապէս որ իբրեւ նորագոյն հրատարակութիւն՝ ունենար իւր նորագոյն կատարելութիւններն ու առաւելութիւնները։ — —

Զարմանալի երեւոյթ մը կը տեսնուի ցարդ հրատարակեալ Հայոց Պատմութեանց մէջ։ Մինչդեռ գիտնական աշխարհք, ազգային եւ օտարազգի գիտնականք, ամենայն հնարիւք ազգային պատմութեան թեր ու դէմ կողմը յերեւան հանելու կը ճգնին, եւ զօրեղ ու համոզիչ պատճառներով իւրաքանչիւր ոք ճշմարիտ երեւցածը հաստատելու կը ջանայ. եւ իրն անաչառ նկատելով, մինչդեռ մեր ազգային հին պատմագրաց ճշմարտապատում ըլլալուն բանաւոր կասկածներ ծնած են առ գիտնականս, ազգային մանկտին իւր դասագրոց մէջ եւ ոչ ծանր առարկութիւն մը կը գտնէ՝ երկակողմանի պատմական, մեծ բանակռուին . . . ։ Չենք ըսեր սակայն թէ, օր. ալ. Հայկազանց բովանդակ հարստութիւնն իբրեւ առասպելեալ ի բաց պարուրենք մեր դասագրոց մէջէն, ո՛չ բնաւ. մենք այսչափ խրատապահանջ չենք, (թէպէտ կան որ այսպէս իսկ կը պահանջեն.) սակայն կ'ըսենք եւ դարձեալ կ'ըսենք, որ գոնէ իբր ծանօթութիւն ազդ տրուի ուսանողաց թէ "ինչպէս ամէն ազգ իւր դիւցազանց (héros) վէպերն ունի, նոյնպէս հայ պատմութիւնն ալ ունի իւր դիւցազնականքն„։ Որո՞նք են . . . այս հարցումն ահա կը մնայ "Հայկազանց հարստութեան„ որչափ մասն ընդունելի՝ եւ որչափ մասն յապաւելի կամ մերժելի ըլլալը։ —

Իսկ Յարգոյ Հեղինակին ժամանակագրութիւնն՝ ոչինչ իւիք կը խոտորի ցարդ յերեւան ելած Հայոց Պատմութեանց՝ ըստ հաւանական կարծեաց տրուած ժամանակագրութեննէն։ Սակայն կան մասեր, որոնց Թուականն ըստ պահանջման ժամանակիս կրնար եւ մանաւանդ թէ պէտք էր ուղղուիլ։ Օրինակ իմն. Արշակ Բ.ին թագաւորութեան ժամանակը կը համարուէր ցարդ 19—23 տարի. այսպէս ունի եւ Պր. Մամուրեան՝ թագաւորութեան տարին դնելով 364—382։ Բայց թէ Արշակայ Բ.ի թագաւորութիւնն 30 եւ աւելի տեւեց՝ յայտնի է ի Բուզանդայ, որուն հաւատարիմ պատմագիր ըլլալը ճանչնալու առաւելութիւնն ալ որ մեր ազգն օտարազգի գիտնականաց շնորհած է։ Այն հաւատարմութիւնն հաստատելը մեր ապագայ երկասիրութեան կը թողունք։ Թէպէտ Բուզանդայ պատմագրութեան մէջ բոլորովին իսկ կը պակսի ժամանակագրութիւն, սակայն Արշակայ Բ.ին թագաւորութեան տեւողութիւնն ճիշդ կ'աւանդէ։ Հայք 24 Պարսիկ զօրապետաց հետ 28 ճակատ մղելէն ետքը, մեծամեծ նախարարք սկսան թագաւորէն հեռանալ, որոնց պարագլուխ եղան Աղձնեաց իշխանները։ Ահա մեր պատմագիրը. "Զերեսուն եւ չորս ամս ետուն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին, եւ յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկրին կողմանքն„։ (Դ. Դպր. Գլ. Ծ։) Եւ դարձեալ մնացեալ նախարարք Ներսէս կաթողիկոսին քով ժողվուելով սկսան Ներսիսին ըսել. "Դու, տէր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղեւ ի պատերազմէ.„ (Գլ. ԾԴ.)։ Ուրեմն որպէս զի 30—34 տարի թագաւորէ Արշակ Բ. հարկ է որ Գաթրճեան Հ. Յովսեփայ հետ սկիզբ դնենք իւր թագաւորութեան՝ 350 տարին[1] եւ վախճան՝ խոտորելով Գաթրճեանէն՝ 382—384 տարին, եւ այսպէս բոլոր նախորդ թագաւորաց տարիքը պէտք ենք սոյն համեմատութեամբ երկարացուցանել։ Խորենացւոյն՝ մեր Տիրանայ վրայ պատմածն կը խառնակէ այս Թուականն, սակայն եթէ ճշդապատումն Բուզանդայ տուած տեղեկութեանց հետեւինք, կը վերնայ դժուարութիւնն. մանաւանդ որ Խորենացին ալ (Գ. Գլ. ԼԽ.) Արշակայ համար "թագաւորեաց ամս երեսուն„ կ'ըսէ։ — —

Մեր այս դիտողութեանն նպատակն է նոր ժամանակի գրասիրաց օգտակար խթան մ'ըլլալ, որ ոչ այնչափ հետամուտ ըլլան դասագիրք ի լոյս ընծայելու, որ մեր ուսանող սերնդեան մասնաւոր ծառայութիւն մը չեն մատուցաներ, հապա մի քան զմի կատարելագոյն դասագրքեր, որոնցմով գիտութեան ասպարիզին վրայ քայլ առ քայլ յառաջանալու թեւ ու թիկունք գտնեն։ Այս օգուտն համոզուած ենք թէ կը բարեխառնէ անաչառ ճշմարտութեան մը խստութիւնը։

Հ. Գ. Մ.

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ԺԱՄԱԿ ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԷՆ

*Մեծարգոյ խմբագիր։*

*Հայաքաղաք (Գերլա), 8 Ապրիլ, 1888։*

Լսեցի եւ շատ ուրախացայ, որ կ'ուզէք Հանդէսի Ուսումնական բաժնին մէջ Թղթակցութիւն վերնագրոյ տակ ալեւայլ ազգային տեղագրական, ազգագրական, հնախօսական եւ այլ տեղեկութիւններ տալ ընթերցողաց։ Ուրախ եմ որ ես, ինչպէս կը կարծեմ, առաջին կ'ըլլամ այս համակրելի վերնագրոյն տակ մտնողներուն մէջ, եւ ապահով եմ որ հետեւողներ կ'ունենամ։ Թող տալով ուրիշ անգամուան եւ յարմար առթի տեղագրական եւ հնախօսական տե-

[1] Հ. Գաթրճեան (Տիեզերական Պատմութիւն) Արշակ Բ.ին տարին կը դնէ 350 369։ Իսկ Սէն Մարթէն՝ 341—379 (Տես՝ Mémoires historiques et géographiques sur l'Arménie. Tom. I. p. 413)։

digitised by A.R.A.R.@